

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

2019 թվականի

N ____ Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 12-Ի N 430-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանելու մասին» N 430-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածի 9-րդ կետի երրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պայմանագիր կնքած քաղաքացիների ուսումնառությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվում է պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ, բարձրագույն ուսումնական հաստատության կողմից համապատասխան մասնագիտության համար սահմանված տարեկան վարձի չափով, սակայն ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 163-Ն որոշմամբ սահմանված ըստ կրթական աստիճանների և հավատարմագրման արդյունքների ուսման վարձի առավելագույն չափը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2018 թվականի նոյեմբերի 24-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 430-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջների համաձայն 2018/2019 ուսումնական տարում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող (բուհ ընդունված) անձանց ՀՀ պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած քաղաքացիների բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անվճար կազմակերպելու դրույթները հստակեցնելու անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Գործող որոշմամբ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող (բուհ ընդունված) անձանց կողմից ՀՀ պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած քաղաքացիների ուսումնառությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ բարձրագույն ուսումնական հաստատության կողմից համապատասխան մասնագիտության համար սահմանված տարեկան վարձի չափով, սակայն ոչ ավելի, քան յուրաքանչյուր տարվա համար պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման չափը:

Խնդիրն այն է, որ որոշ դեպքերում բարձրագույն ուսումնական հաստատության կողմից համապատասխան մասնագիտության համար սահմանված տարեկան վարձի չափն ավելի է, քան յուրաքանչյուր տարվա համար պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման չափը: Այդ դեպքում խնդիր է առաջանում այդ երկու մեծությունների տարբերության փոխհատուցման գործընթացում:

Առաջարկվող նախագծով պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման չափի առավելագույն շեմ է սահմանվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N

163-Ն որոշմամբ սահմանված ըստ կրթական աստիճանների և հավատարմագրման արդյունքների ուսման վարձի առավելագույն չափը:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Բնագավառում իրականացվող քաղաքականությունն ուղղված է ապահովելու «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն «Պատիվ ունեմ» ծրագրի պատշաճ կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

5. Ակնկալվող արդյունքը

Որոշման նախագծի ընդունմամբ կապահովվի «Պատիվ ունեմ» ծրագրի պատշաճ կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները:

6. Այլ տեղեկություններ

Չկա:

ՏԵՂԵԿԱԼՔ

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի
N 430-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»**

**ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ
իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ**

Որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում
փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱԼՔ

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի
N 430-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»**

**ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ
պետական բյուջեի ծախսերի կամ եկամուտների ավելացման կամ նվազեցման
վերաբերյալ**

Որոշման նախագծի ընդունումը պետական բյուջեյում լրացուցիչ ծախսերի
անհրաժեշտություն չի առաջացնում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 1430-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ:

| Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունները |
|---|--|----------------------|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| <p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p> <p>20.02.2019թ</p> <p>01/9-2/2554-19</p> | <p>Նշվել է, որ քանի որ նախագծով նախատեսվող փոփոխությունն անձի իրավական վիճակը վատթարացնող բնույթ ունի, ապա վերջինիս գործողությունը կարող է տարածվել միայն նրա ուժի մեջ մտնելուց հետո ծագող հարաբերությունների վրա:</p> | <p>Ընդունված չէ:</p> | <p>Որոշման նախագծում նշված փոփոխությունն անձի իրավական վիճակը վատթարացնող բնույթ չունի, հակառակը ՀՀ պաշտպանության նախարարության հետ քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած քաղաքացիների ուսումնառությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում կիրականացվի պետական բյուջեի միջոցների հաշվին և փոխառության գումարի առավելագույն շեմը կսահմանվի ոչ թե յուրաքանչյուր տարվա համար պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման չափը՝ 616,4 հազար դրամ, այլ ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 163-Ն որոշմամբ սահմանված ըստ կրթական աստիճանների և հավատարմագրման արդյունքների ուսման վարձի առավելագույն չափը՝ 1000,0 հազար դրամ:</p> |
| <p>ՀՀ պաշտպանության նախարարություն</p> <p>04.03.2019</p> <p>ՊՆ/510-325</p> | <p>Առարկություն և առաջարկություն չկա:</p> | <p>Ընդունված է:</p> | |

| | | | |
|---|---|---------------------|--|
| <p>ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>07.03.2019</p> <p>01/14/4888-19</p> | <p>Առարկություն և առաջարկություն չկա:</p> | <p>Ընդունված է:</p> | |
|---|---|---------------------|--|